



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԱԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍ ՈՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի օր վերադարձաւ Լոս Անճելըս եւ վերսկսաւ թեմական աշխատանքներուն:

Ծանօթ է, որ 22 Նոյեմբերին Առաջնորդ Սրբազան Հայրը Վատիկան մեկնած էր, միանալու համար Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին եւ մասնակից դառնալու Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետին՝ Ն. Ս. Պենետիկտոս ԺԶ. Պապին հետ Նորին Սուրբ Օծուրեան հանդիպումներուն եւ պաշտօնական յայտագիրին: Առաջնորդ Սրբազանը Վատիկանէն անցած էր Լիբանան, մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին:

Վատիկանի մէջ, պաշտօնական հանդիպումներուն կողքին, տեղի ունեցան յատուկ արարողութիւններ, ապա նաեւ դասախօսական հանդիպումներ:

Նշենք, որ մեր Թեմի պատգամաւորներն ալ վերադարձած են Անթիլիասէն:

Առաջնորդ Սրբազանը Կիրակի, 14 Դեկտեմբերին պիտի նախագահէ Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին:

PRELATE RETURNS FROM ANTELIAS

On Tuesday, December 9th, H.E. Archbishop Moushegh Mardirossian returned to Los Angeles from a two week trip to the Vatican and Lebanon. The Prelate had departed for the Vatican on November 22nd to join the entourage of H.H. Catholicos Aram I on an official visit with H.H. Pope Benedict XVI. Alongside the official meeting with the Pope, the delegation participated in various events.

The Prelate then headed to Antelias, Lebanon for the General Assembly of the Catholicosate. The Prelates and lay delegates from all of the Prelacies of the Catholicosate gathered in Antelias for the Assembly, during which a wide range of issues were discussed. Delegates from the Prelacy also participated in the General Assembly.

The Prelate resumed his duties at the Prelacy on Wednesday, December 10th, and on Sunday, December 14th will preside over Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena.

ԹԵՄԻՍ 35ԱՄԵԱԿԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ՝ 21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ, Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՁ

Կիրակի, 21 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր տօնակատարութիւն, Զիւսիսային Ամերիկայի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական առաքելութեան 50ամեակին, ինչպէս նաեւ մեր Թեմի 35-ամեակին առիթով:

Ձեռնարկը կը վայելէ հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Առաջնորդ Սրբազան Զօր, Ժողովականութեան ներկայացուցիչներու եւ գաղութիս ներկայացուցչական դէմքերու:

Չանդիսութիւնը կազմակերպուած է Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան կողմէ: Խօսք պիտի առնեն Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ տիար Խաժակ Տիքիճեան եւ իրաւաբան Արման Զեօտեան:

Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր, որուն մասնակցութիւն պիտի բերէ Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան երգչախումբը եւ արուեստագետներ Ռազմիկ Մանսուրեան ու Անահիտ Ներսիսեան: Մուտքը ազատ է:

35TH ANNIVERSARY OF THE WESTERN PRELACY

On Sunday, December 21st, the 50th anniversary of spiritual service and growth of the Catholicosate of Cilicia in North America and the 35th anniversary of the Western Prelacy will be celebrated at St. Mary's Church in Glendale. The event begins at 6:00 p.m.

The celebration is being held under the auspices of the Prelate and is organized by the Religious and Executive Councils.

The event will feature keynote speeches by Central Executive member Mr. Khajag Dikijian in Armenian and Mr. Armand Keosian, Esq. in English. An artistic program will also take place with the participation of the Armenian Society of Los Angeles Choir as well as singers Razmig Mansourian and Anahid Nercesyan.

Admission is free and open to the public.

ԱԶԳ. ՌՈՉ ԵՒ ԱԼԵՔ ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ

Չորեքշաբթի, 10 Դեկտեմբերի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեցին Յոլիվուտի Ռոզ Եւ Ալեք Փիլիպոս Ազգային վարժարանի 8-րդ կարգի աշակերտները, ընկերակցութեամբ վարժարանի տնօրէնին եւ պատասխանատու դաստիարակներուն եւ ընդունուեցան Առաջնորդ Սրբազան Զօր կողմէ:

Առաջնորդ Սրբազանը «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ դիմաւորեց աշակերտները եւ անոնց բացատրութիւն տուաւ Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան դաշտերուն ու ժողովուրդի կեանքին մէջ դերակատարութեան մասին: Ան նաեւ ուրախութիւն արտայայտեց, որ Վատիկան ու Անթիլիաս իր ուղեւորութենէն վերադարձէն ետք, առաջին հանդիպումը կ'ունենայ աշակերտներու հետ:

Այնուհետեւ, աշակերտները այցելեցին տրակառոյց շէնքի տարբեր բաժանմունքները, սկսելով «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռէն, եւ ծանօթացան աշխատանքի ու կառոյցի իւրայատկութիւններուն:

ROSE AND ALEX PIILBOS SCHOOL STUDENTS VISIT THE PRELACY

On Wednesday, December 10th, eighth grade students from Rose and Alex Pilibos School, accompanied by Principal Dr. Viken Yacoubian and teachers, visited the Prelacy.

The Prelate welcomed the students at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where he explained to them the work that is carried out by the Prelacy and its general mission.

The students were then led on a tour of the headquarters, starting at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel, during which they were familiarized with the various departments and structure of the Prelacy.
